# ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԴՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. Վ Ա Զ Գ Ե Ն Ա-Ի ԵՎ ՆՎԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐԻ ՈՒ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՓՈԽԱՆԱԿՎԱԾ ՈՂՋՈՒՅՆԻ ՀԵՌԱԳՐԵՐՆ ՈՒ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Մեր լուսաբնակ նախնյաց լույս հավատքի և հույսի բարձունքներեն, վերստին կանգնենք ծագող «Արեգակն արդարութեան» և վերստին կլսենք փրկարար երգը Բեթղեհեմի հրեշտակներուն՝ «ՓԱՌՔ Ի ԲԱՐՁՈՒՆՍ ԱՍՏՈՒԾՈՅ ԵՒ ՅԵՐԿԻՐ ԽԱՂԱՂՈՒԹԻՒՆ, Ի ՄԱՐԴԻԿ ՀԱՃՈՒԹԻՒՆ»:

Այս մեծ և սքանչելի ավետիսով սիրտ առած, այս Նոր տարվա սեմին կողջունենք և կօրհնենք զՁեզ բոլորդ, ամենայն հայոց Սրբություն Սրբոց լույս էջմիածնեն, մարդացյալ Փրկչի Իջման Ս. Տեղեն:

Ողջո՜ւյն և օրհնությո՜ւն Ձեզ և աստվածասեր հոգևոր դասիդ:

Ողջո՜ւյն և օրհնությո՜ւն ազգային-եկեղեցական և բարեսիրական կազմակերպությանց բարեպաշտ անդամներուն:

Ողջո՜ւյն և օրհնություն մեր սիրեցյալ ու հարազատ ժողովուրդի բոլոր զավակներուն, բոլորին անխտիր:

Եվ նաև Մեր հայրական սրտեն բխած բյուր մաղթանքներ բարի ամենուդ, ամենուդ՝ վասն հաջողության առաքինի կյանքի, վասն երջանկության ու բարօրության Ձեր, վասն հաջողության առաքինի գործոց Ձեր:

Խաղաղությո՜ւն Ձեզ, խաղաղությո՜ւն Ձեր հյուրընկալ երկրին և ժողովուրդին, խաղաղությո՜ւն ամբողջ աշխարհին, համայն մարդկության, այժմ և հավիտյան:

«ՔԱՋԱԼԵՐԵՑԱՐՈՒՔ ԵՒ ԶՕՐԱՑԻՆ ՍԻՐՏՔ ՁԵՐ, ԱՄԵՆԵՔԵԱՆ ՈՅՔ ՅՈՒՍԱՑԵԱԼՔ ԷՔ Ի ՏԷՐ» (Սաղմ. ԼԱ 25), զի «ՔՐԻՍՏՈՍ ԾՆԱՒ ԵՒ ՅԱՅՏՆԵՑԱՒ»:

Սիրով և օրհնությամբ՝

ՎԱԶԳԵՆ Ա

ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

---

Նմանօրինակ շնորհավորական գրություններ ուղարկվեցին նաև թեմական և կրոնական խորհուրդներին, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Կենտրոնական վարչության (Նյու-Յորք), Գալուստ Կյուլպենկյան հիմնարկության կենտրոնական խնամակալության մեծահարգ նախագահ դոկտ. Ժոզե դե Ազերեդո Պերդիգաոյին (Լիսաբոն), Մայր Աթոռ Ս. Էջմիածնի տպարանի հանձնախմբին (Նյու-Յորք), Աբգարյան ավանդի և Ս. Էջմիածնի հիմնադրամի հանձնաժողովին (Լոնդոն), Մայր Աթոռ Ս. Էջմիածնի օժանդակ հանձնախմբին (Բեյրութ), հայրենակցական, մշակութային, տիկնանց, երիտասարդաց և օրիորդաց զանազան կազմակերպություններին, Մայր Աթոռի բարերարներին և ազգային ծանոթ դեմքերին:

---

## ՆՈՐԻՆ ՍՈՒՐԲ ՕԾՈՒԹՅՈՒՆ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԾԱՅՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՎ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԷՋՄԻԱԾԻՆ

Մարդացյալ Փրկիչը Իր խաղաղությամբ և հոգևոր վերածնունդով վերանորոգե խռով աշխարհը բոլոր ժողովուրդներու երջանկության համար: Միածինը զորավիգ ըլլա Վեհիդ և առատ պտուղներով արդյունավորե Ձեր եկեղեցանվեր բոլոր ձեռնարկները: Այս է ամենուս սրտագին մաղթանքը Ամանորի և Ս. Ծննդյան առթիվ:

ԳԱՐԵԳԻՆ ՊԱՏՐԻԱՐՔ

ՍՏԱՄԲՈՒԼ

---

Սրտագին շնորհավորություններ և լավագույն բարեմաղթություններ Ամանորի և Ս. Ծննդյան համար:
Մաղթելով Ձեզ քաջառողջություն և հաջողություն՝

ԽԱԴ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԲԵՅՐՈՒԹ

---

Նոր տարվան և Աստվածահայտնության տոնի առթիվ կներկայացնենք Ձերդ Ս. Օծության մեր և Սրբոց Հակոբյանց միաբանության հարգալից շնորհավորությունները:
Կաղոթենք Ամենակալին Ձեր կյանքի արևշատության համար, խաղաղությամբ հովվելու մեր Եկեղեցվո հոտը:

ՍՈՒՐԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ

ԵՐՈՒՍԱՂԵՄ

---

Նորին Ս. Օծություն Վեհափառ Հայրապետի անունով ստացվեցին նաև բազմաթիվ շնորհավորական հեռագրեր և նամակներ, ամենաջերմ և հարգալից զգացմունքներով գրված, արտասահմանի և ներքին մեր բոլոր թեմերից, թեմակալ առաջնորդներից, թեմական և եկեղեցական խորհուրդներից, հոգևոր հովիվներից, ազգային-եկեղեցական և մշակութային կազմակերպություններից, հայ և օտար պաշտոնական անձնավորություններից: